

ԾԱՂԻԿ Կը հրատարակու Շաբաթ օրերը և տարին 50 թիւ:

Բաժանորդագին ԿԱՆԻՍԻՆ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր: — Վեցամսեայ բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան նաւակադրոշմ՝ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապագիկ կը գրկուի, այնուհետեւ բաժանորդագին չը վճարողը կը դադրի թիւթ ընդունելէ:

Երանուցման տողը 2 շուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար գիմել

Առ Տեօփէն-Հրատարակիչ

ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱՆԱԳ-ԱՇԵՍԱՆ

Պոլիս, Պաշէ-Կափու, Թաշ Խան, թիւ 50

در عليه ده بنجه قوشنده طاش خاندۀ هـ نومروده

«زاغيك» غزتمسى مديرى بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Բաղաժական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 11

Շ Ա Բ Ա Թ

27 MARS 1893

Ջ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Բազմաթիւ ծանօթից ու բարեկամաց, և մասնաւորապէս սիրելի Յովնան էֆ. Փալազաչեանի, խնդրանք, այս օրէն սկսեալ կ'ստանանք Մալիկի Խըմբադրապետութեան պաշտօնը:

Կը յուսամ թէ յարատեւ ու անվրէժատ ջանքիւ և հին ու նոր խմբադրակիցներու և եւանդուն աջակցութեամբ, Մալիկ միշտ հետաքրքրական ու հրահանգիչ նիւթերու անուշահոտ փունջ մը պիտի լինի հայ գրականութեան մէջ, և ժողովուրդը պիտի չը վարանի ընել քաջալերական ընդունելութիւն մը:

Մալիկ իւր սկզբանց մէջ պիտի մնայ միշտ. ամէն դասակարգ և ամէն հասակ ու սեռ հոն պիտի գտնեն իրենց սիրելի ու միանգամայն բարոյացուցիչ նիւթերը, բայց աւելի հաճոյ կերպիւ շարագրուած, աւելի յարմար՝ արեւելեան, հայկական կեանքին: Ծանօթ եւ անուանի գրիչներ պիտի զարգարեն իւր էջերը:

Ներկայ թիւին մէջ նիւթոց և գրողներու զանազանութիւնն այնքան զգալի պիտի չլինի. այլ հետզհետէ հրատարակելի թիւերէն պիտի տեսնուի թէ խոստմնապահ լինելու անփոյթ չեմ:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

Ջ Ա Տ Ա Գ Ո Վ

Մեր ընթերցողները գոհ կը մնան անշուշտ լսելով, թէ քանի մ'օր առաջ մեծանուն հայագէտ Տիմիթրիոս էֆ. Չօլաքիտէսի՝ Հայոցս նկատմամբ խիստ կարեւոր մի յօդուածը լոյս տեսաւ մայրաքաղաքիս բոլոր յոյն լրագրաց մէջ:

Տիմիթրիոս էֆ. այս անգամ ալ իւր ծայնը բարձրացուցած է՝ իւր ազգայնոց մէջ տիրած դարաւոր մի նախապաշարման դէմ: Օրթոդոքս եկեղեցւոյ մէջ հեղինակութեան պատիւ վայելող քանի մը պատմագրաց անսալով՝ Յոյնը կը կարծէին թէ ի մեզ Առաջաւորաց շաբաթական պահքն հաստատուած է ի պատիւ Ս. Սարգսի:

Յիշեալ համակրելի հայագէտը վաւերական ապացոյցներով կը հաստատէ, թէ Հայոց եկեղեցին Ս. Աստուածածնայ և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին պահքերէն զտո՝ ուրիշ ու է որոյ կամ սրբուհւոյ համար շաբաթական պահք չէ հաստատած: Տգիտութիւնն է միայն որ Առաջաւորաց պահքին և Ս. Սարգսի տօնին մի և նոյն շաբթուն պատահելէն հետեւցուցեր է, թէ Հայք Ս. Սարգսի ի պատիւ պահեցողութիւն կ'ընեն:

Ահա այդ շաբաթական պահքոց պատմական ծագումը:

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ եպիսկոպոս ձեռնադրուած՝ կեսաթիայէն կը վերադառնար բազմաթիւ եկեղեցականաց և աւագանւոյն ուղեկցութեամբ ու մեծ հանգիսիւ. Եփրատայ ափանց մօտենալով՝ գտաւ անհուն անհամար բազմութիւն Հայոց, որոցմէ 400 թուր (չորս միլիոն) մկրտեց անմիջապէս և այսպէս Հայք ազգովին բռնուեալ հռչակուեցան. այս անօրինակ դէպքին յիշատակ, հաստատուեցաւ հինգօրեայ առաջին պահեցողութիւնն (ծով), որ է Հայոցս այժմու Առաջաւորաց պահքը, զարդ խիստ նուիրական ջերմեռանդն ազգայնոց համար:

Այս առթիւ Տիմիթրիոս էֆ. կը յիշեցնէ թէ ոչ մի ազգ իւր ի քրիստոնէութիւն դարձն այսպիսի նշանաւոր կերպիւ կատարած և այսպիսի սրբական յիշատակութեամբ մը յաւերժացուցած է:

Պոլսոյ Յունական Պատրիարքարանի Ալիթիա լրագիրն, ինչպէս և բոլոր յոյն թերթերն յիշեալ յօդուածն իրենց ազգակցաց ուշադրութեան յանձնելով, մի անգամ ևս կը հաստատեն, թէ Արեւելեան (ինչպէս կ'ըսեն) Քոյր եկեղեցւոյ զաւակունք շատ տրամադիր են ի մասին Հայ եկեղեցւոյ դաւանութեանց՝ իրենց սխալ համոզումներն ուղղելու. Հայքի (Հէյպէլի կղզին) Աստուածաբանական վարժարանին տեսչութիւնն առ Չօլաքիտէս էֆ. նամակ մ'ուղղելով՝ չը նորհակալութիւն յայտնած է իւր մատուցած այս ծառայութեան համար:

Մեք ևս շնորհակալ եմք յիշեալ հայասէր և լուսամիտ գրագէտէն, որ քառորդ դարէ ի վեր Հայ եկեղեցւոյ Սրբութիւնն ու Առաքելականութիւնն իւր ազգակցաց հասկըցունելով, տգիտութենէ ու մոլեռանդութենէ յառաջ եկող հին ատելութիւններն ու թշնամանքը յաջողած է արմատախիլ ընել:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՇՈՐ ՀԵՅ ԿԵՆՍԵՐՈՒԹԵԱՆՑ

143 էջէ բաղկացեալ ու մաքուր տպագրութեամբ սիրուն հատորիկ մ'է «Շար Հայ կենսագրութեանց»ը, որ վերջին օրերն լոյս տեսաւ աշխատասիրութեամբ Արրահամ էֆ. Այվազեանի:

Այս առաջին հատորը կը պարունակէ մեր ժամանակէն անմիջապէս յառաջ ազգորոշ չորս կարեւոր անձնաւորութեանց՝ Պալասեցի Գեորգ պատուելիի, Մասթիս դպիրի, Զէնեցի Պողոսի (Հոգեւոյ Տ. Ներսէս Պատրիարքի պապուն) և Ալամխարեանց Յարութիւն վարդապետի մանրամասն կենսագրութիւնները:

Խօսելէ առաջ սոյն աշխատասիրութեան գրական ու պատմական արժանիքին վրայ, կարեւոր կը համարինք սա պարագայն ի վեր հանել թէ՛ մեր մէջ ժամանակակից աւանաւոր Ազգայնոյ մը կեանքը մանրամասն ու ճշգրիտ կերպով ի գիր առնուլ՝ Մեծ Մակեդոնացւոյն և կամ Պոնաքարթի կենսագրութիւնն ընելէ անհամեմատ դժուարին և տաժանելի աշխատութեան մը ձեռնարկել է. քանզի անտարբեր գտնուած եմք մեր՝ իւր մէկ ու կէս դարու ժամանակակից պատմութիւնն խզահար կերպով և խնամօք ի գիր առնուլ, որով կենսագրին կը պակսին ճշգրիտ տեղեկութիւնք և վաւերական աղբիւրներ:

Այս տխուր վիճակը, տոհմային կեանքին համար մեր այս անթութութիւնն Ազգ. վարժարանաց մէջ ալ կը տիրապետէ դժբաղդաբար:

Այո՛, մեր Թաղ. վարժարաններէն չըջանաւարտ ելած բազում աշակերտք, չգիտեն օրինակի համար, թէ ո՞վ էր Պէզնեան Յարութիւն Ամիրայ կամ Խօնա Նազար. այդ անձանց և անոնց գործոց մասին եթէ բան մը հարցունես իրենց, ապուշ ապուշ երեսդ պիտի նային, որովհետեւ իրենց ուսած պատմութեանց մէջ այդ անուններն ու իրենց գործերը գոյութիւն չունին, թէպէտ իրենք, այդ չըջանաւարտք, Պէզնեանի կառուցած վարժարանին մէջ և անոր կտակած դրամոց շնորհիւ ուսում առած լինին:

Մասնաւոր յօդուածի մը վերապահելով այս խնդրոյն վրայ աւելի մանրամասնաբար խօսիլ, անցնինք մեր նիւթին:

Ճիշդ մեր վերեւ յիշած պատճառներուն՝ ու մատնանիչ ըրած այդ անտարբերութեան ու թերին՝ մէջ է որ Այվազեան էֆ. ի այս նոր աշխատասիրութիւնը մեծ կարեւորութիւն կ'ստանայ և մեր մատենագրութեան մէջ կուգայ կարեւոր պակաս մը:

լրացնել: Գրեթէ մոռացութեան մատնուած մեր ժամանակակից այդ ակնաւոր Հայերուն կեանք տալ, այնքան մանրամասնութեամբ պատկերացնել նոցա բազմաբեղուն գործունէութիւնն և նոյն իսկ այդ անձանց շատաւիղներուն նախանձն ու զարմանքը շարժելու չափ սիրուն անէֆօքներով ու մանրավէպերով ճոխացնել ու համեմել իւր նիւթն, ասի, օրինակելի համբերատարութեան, անվհատ յարատեւութեան, մանրախոյզ հետազոտութեան տիպար հանդիսացող Ալվազեան Արրահամի մը գործը միայն կրնար ըլլալ: Եւ արդարեւ երեսուն տարուան մանրամասն խուզարկութեանց, անգիր ու գրաւոր աւանդութեանց առատ պաշար մ'ունի Ալվազեան Լ.Ֆ. իւր քով՝ զոր տակաւ ի լոյս պիտի բնծայէ:

Իմ կողմանէ բարեկամական խորհուրդ մը միայն:

1⁰. Եթէ կարելի ըլլայ, լաւ է որ իւր կենսագրերը պատկերներն ալ միասին դնէ:

2⁰. Եւ մանաւանդ ի բոց թողու այն անպէտ ու անկարեւոր մանրամասնութիւններն որք ոչ միայն բուն նիւթին հետ յարաբերութիւն չունին, այլ և այդ առթիւ կարեւորն ալ կրնան զոհել:

Իմ այս անկեղծ դիտողութենէս ի դատ, գործը իւր ամբողջութեամբ գնահատելի կը գտնեմ յոյժ, և արժանի՝ ամէն քաջալերութեան:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՍԱՐԵԱՆ

Ծ. ԽՄԲ. Շար Հայ Կենսագրութեանց կը վաճառի ամէն գրաւաճառաց քով ի դին 6 զրչ. Կեդրոնատեղին է Սուրբ-Համամ, Պաղատեղեան գրատունը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԵՊԵՐ

ԲԱՂԴԱՌՈՐԸ

Ա.

ՄԵՐ ԴԱՌՆՈՒԹԻՒՆԸ

1864ին փոքր տղայ մ'էի և աշակերտ Գուգարուի դրոսի Պլզեան վարժարանին մէջ, որ, այն տեսները, Պոլսոյ հայ վարժարանաց լաւագոյնն էր ի մասին բարեկարգութեան ու յառաջդիմութեան. չկարծէք թէ մանկավարժական օրինաց կիրառութիւնն իյարդի էր անդ. մեր կրթութեան հոգածներուն անձանթ էր մանկավարժութիւնը. այս բառն հնարուած իսկ չէր. Ֆալախան ու թաթը, երբեմն ալ շըշ-թայն, տղայքն ահարեկելով խելօք և հնազանդ կեցնելու խոստանագոյն միջոցներն էին. որ ոչ լուրից ունկամբ, լուրի թիկամբ. միամիտ ծնողաց ուրախութիւնն էր լսել թէ իրենց զաւակները ծեծ կ'ուտեն և անխնայ. յուսալից կը լինէին թէ նոքա մեծնալով բարի քաղաքացիներ պիտի հանդիսանան. այս մասին հօրս ուրախութիւնն անչափ էր. օրն երեքէ հինգ Փալախա հաշապարդ ճաշակելէ զատ, թաթի և կօշիկ անթիւ անհամար հարուածներու նշաւակ լինել իմանալով, սիրտը կ'ուռէր բերկրանօք և հաղիւ զսպումը հպարտութեամբ կը կրկնէր յաճախ. «Կը տեսնեմ որ տղաս մարդ պիտի ըլլայ». ի հարկէ ես ու հայրս այս մասին մի և նոյն զգացումը չունէինք. անընդհատ ծեծի ցաւն և սպառնալեաց սարսափը խաւար կ'երեցնէին ինձ աշխարհը, և ատելի՝ կեանքը. իրաւ է որ ես ալ, ինձ նման բազում տղայք ալ, անառակ էինք չա-

փէ աւելի, բայց ունէինք մեզ արժանաւոր կառավարիչ մը, տիրացու Սահակը, որ՝ մեծին Ալէքսանտրի նման՝ գլուխը դէպ ի մէկ ուսը ծռած՝ անդադար կը պտտէր ուսումնարանի ընդարձակ սրահին մէջ և ամէն վայրկեան զմեզ կը ձերբակալէր ի յանցանքս (en flagrant delit), կա՛մ գրասեղանէ գրասեղան ձգուած հեռագրաթիւերը նըմարելով, կա՛մ մեր թատերական ներկայացմանց վրայ հասնելով, եայլն. մեծի, փոքրի, հարստի, աղքատի խորութիւնն չը կար բնաւ. ամէնքն ի պատիժ. բացարձակ հաւատարմութիւն, (այժմու աղքատ տղայք շատ տեղ զուրկ են այս վերջին միւլթարութենէն). այլ հաղիւ ծեծէն ելած, և գեռ անոր ցաւին տղեցեւորութեան ներքեւ, կ'ըսէինք շարունակել մեր խաղերը, որպէս թէ բնաւ ընդմիջուած չլինէին անոնք:

Վարժարանէն դուրս ալ ենթակայ էինք աշակերտ հսկողութեան. փողոցի մէջ, մանաւանդ ծովեզերքը, խաղացողները վստահ էին թէ վաղուի ժրը պիտի գանձակոծուին անխնայ, բայց հարկ էր վարժարան գնալ, փախուստ տալն աւելի վտանգաւոր էր. տնտեսք, ժամակոյժք, ծնողք, վարժապետք ամէն կողմ կը խուզարկէին, յանցաւորը կը գտնուէր և ճանկը կ'իյնար կառավարչին, որ յայնժամ խալաւ կը մոռնար թէ մարդկային սրտին մէջ գթութիւն ըսուած զգացումը կայ. Խեղճ Նաչիտը, ընկերներէս մին, ձկնորսի զաւակ, ծովեզրը խաղալու միջոցին տեսնուած էր մի անգամ, ուստի խորհած էր յաջորդ առաւօտեան Ֆալախայի հարուածներուն աղեցեւորութիւնն ի դերեհանել՝ գուլպային ներքեւ, ոտքին վրայ, շարժելով սարէկայի ձուկեր. արդէն թեթեւ ճիգով մը աչքերէն հեղեղի պէս արտասուք կը հոսեցնէր: Աւտուռ, պառկեցուցին զինքը, կօշիկներն հանեցին և ոտքերը պրկեցին. ամէնուս սիրտն արձագանք տուաւ սկիզբի երկու երեք հարուածներուն. սոսկ մամբ կը համակուէինք՝ լսելով դժբաղդ տը ղուն սրտաձմիկ վայնասունն ու մեղայները. բայց տիրացու Սահակ արուեստին մարդն էր և զնաչիտ լաւ կը ճանչէր. յանկարծ հանձարի նշոյլը փայլեցաւ մոտքին մէջ և հըրամայեց յանցաւորին գուլպայներն հանել. տեսարան... ձկնորսը գետին կը թափթըփին, բոլոր սրահը կը թնդայ աշակերտաց բարձրագոյն և ուրախ աղաղակներով. Ֆալախան պրկող տղայք ետ կը քաշուին եւ Նաչիտ, ընդհանուր խառնակութեան մէջ ոտք ելնելով, կ'երթայ փարիւ վարժապետին ծնդացը. այս խառնազանձ երեւոյթին հանդէպ, տիրացու Սահակ անդգամ, անվրդով կը թուի՝ չըթանցը վրայ կ'երեւի սոսկայն իրեն յատուկ այն բռնադրօս ժըպիտն որ անհուն փոթորիկն և մեծ աղէտից կարճապետն է և որ զմեզ վերստին լուութեան կը դատապարտէ. հանդարտ ու անխռով դիմք, հաղիւ լսելի ձայնով, «պարոններ, կ'ըսէ, սրբա Ֆալախանի կայ, Նաչիտին յիսուն հարուած և չըթայ, ձեր ամենուրէ ալ քսանական հարուած. ոտք ելէք» և կ'ենենք:

Բ.

ԱՆԱԿՆԱԿԱԼԸ

Ծաղկոցի դուռը կը բացուի յանկարծ և թաղական Հոգաբարձուները յաղթական կը

մտնեն մեր սրահէն ներս. տիրացու Սահակ հաղիւ ատեն կ'ունենայ հրամայելու սր Ֆալախան վերցունեն և ինքն ընդ առաջ կը դիմէ եկողներուն, որ շատ գոհ կ'երեւին զմեզ յոտին տեսնելով, իբր ի պատիւ իրենց. անմիջապէս բերուած աթոռներու վրայ կը նստին. յայնժամ բոլոր աշակերտքս կ'երգենք մին մեր սովորական երգերէն և յետոյ ակնդէտ կ'ապասենք նստելու հրամանին. քիչ մ'առաջուան պատահարը, կարծես, յիշատակ իսկ թողած չէ ի մեզ, ուստի և հաղիւ կը խորհինք թէ հիւրերուն մեկնելէն յետոյ իւրաքանչիւրս անշուշտ պիտի առնու իւր ծեծի բաժինը, բայց ոչ, մեք կը մնանք ոտքի վրայ և հոգաբարձուները նստած կը խօսակցին կառավարչին հետ. վայրկեանները տարիներու չափ երկայն ու ձանձրալի կը թուին մեզ. մէկ մ'ալ ատենապետը, վաճառական Սիմոն ազան, ոտք կ'ենէ և խօսքը մեզ ուղղելով անուշ դիմք կ'ըսէ. «Տղաքս, պարոններ, կ'ուզենք որ այս դպրոցը շատ յառաջ երթայ, դուք ամէնքդ ալ նշանաւոր անհատներ ըլլաք; աղբին ծառայէք, ուստի ձեռքերնուս եկածը կ'ընենք, և ձեզմէ կը խնդրենք միայն որ դիտնաք թէ ձեր օգտին կ'աշխատինք, դուք ալ խելօք կ'ենաք, ջանասէր ըլլաք, պատուոյ համար ապրիք. ահա այս օրուընէ ծեծը բոլորովին դադրեցնելու կուտանք. ձեզ տեսնեմ, զմեզ ամօթով չը հանէք, տիրացու Սահակն ալ վրստահ է որ եթէ ծեծի պատիժը ջնջուի, դուք աւելի խելօք ու աղնիւ պիտի ըլլաք»:

Կը թողում երեւակայել այդ վայրկեանին մեր աղաւթիւնն և հոգեկան վիճակը տիրացու Սահակին որ, սակայն, առանց կորուսելու իւր դիտողութիւնն, ըսաւ. «Տըղաք, աղօթք ըրէք աղաներուն և երգեցէք ես յաւիս պեղնօք. բնաւ չեմ յիշեր այդ երգին ուրիշ անգամ այնքան սրտաւուրչ ձայնիւ երգուիլը. ստուգիւ աղօթք ըրինք մեր Հոգաբարձուներուն, մանաւանդ Սիմոն ազային համար, մանկական աղօթք, անրիծ ու երախտագէտ սրտէ բլլեալ»:

Երբ այդ յարգելի անձինք մեկնեցան, անձկութիւնն ու թերեհաւատութիւնը կը շարժրկէին դեռ զմեզ. խիտ անբնական կը թուէր ծեծին ջնջուիլը. տիրացու Սահակ պիտի համակերպէր անոր. բայց չէ՞ որ ինքն ըսեր է թէ մեք աւելի խելօք ու աղնիւ պիտի ըլլանք՝ եթէ ծեծը վերնայ: Տատամսութիւնն երկար չտեսց. անտեսն եկու տարաւ թաթը, գաւազաններն ու Ֆալախան. մեր դահիճ կարծած կառավարիչն հայրական քաղցրութեամբ ու ծպտելով ըսկըսու կատարել իւր հսկողութիւնը, տալ հրամանները. այդ օրն և յաջորդ օրերը գաւառակներու պէս խելօք կեցանք, այլակերպութիւնը մեծ եղաւ գրեթէ բոլոր աշակերտաց վրայ. այլ եւս ո'չ հեռագրական թիւեր, ո'չ ներկայացումներ և ո'չ յաճախ պատահած ընդհանուր խառնակութիւնը, զրեթէ ամէնքս ալ, կարծես դիւթութեամբ, զգաստացած էինք. ծեծն էր որ զմեզ կը խտացնէր. անոր արգիլմամբ մեր անառակութիւնն այլ եւս գոյութեան պատճառ չէր ունենար. եթէ ծոյլերուն համար սահմանուեցան ծունր դնել, ցամաք հաց ուտել, հրապարակաւ և երբեմն ալ, այցելուներու առջեւ յանդիմանուիլ, և այլ նըմանօրինակ ստորնացոյցիչ պատիժներ, այդ

ամենը թէպէս ծեծէն աւելի խիստ, չափ
քիչերու համար էին, ծոյլերու թիւը չափ
ցանցաւ էր առ մեզ, և մեք կ'ոխտէինք մե-
ծութեան հովմը առնուել, երբեմն խօսակից
անգամ կը լինէինք վարժապետներուն:

Գ.

Ռ Ո Ւ Բ Ե Ն

Տասն և ութամեայ արքանի և թիկնա-
ւէյտ տղայ մը, Պուրէն անուն, հարուստ
Իւսկիւտարցիի մը զաւակ, եկաւ ի մեր վար-
ժարան աշակերտիլ՝ ծեծի դադրելէն իբր
երկու չաբաթ յետոյ, այդ հասակին մէջ,
Ռուբէն գրեթէ ոչինչ գիտեր, ամէն առա-
ւօտ գրպանները միգրեզնով լի դպրոց կու-
գար. իւր նոր հագուստները, չքեղ ժամա-
ցոյցն և անգլիական զմեկին մեզ ամենուս
ցուցնելու տենչն իւր գլխաւոր փառասի-
րութիւնն էր ուսման բնաւ յարմարու-
թիւն չունէր. ծոյլերու յատկացեալ բոլոր
պատիժներու միտքը քամեց. Մեզպուրեան
Մկրտիչ Էֆէնտին, մեր հայկաբանն ու տը-
նօրէնը, «կալու գլուխ» կը կոչէր զինքը, և
Ռուբէն համբերութեամբ կը տանէր ամէն
նախատանաց, կը կրէր ամէն պատիժները,
և կը համակերպէր, եթէ ոչ փիլիսոփայի՝
գոնէ անասունի նման, ամէն ստորնու-
թեանց. գիտէր թէ հայրն հարուստ է, կը
հաւատար գրամին իրեն պատրաստած ա-
պագայ բարօրութեան՝ ու կ'սպասէր... Իր-
մէ ուսայ թէ հայր մ'երբ մեռնի՝ ժառան-
գութիւնն որդւոյն կը մնայ, և Ռուբէն
միամօր որդի էր, այսու հանգերձ բնու-
թեամբ բարի և առատաձեռն էր, ընկերակ-
ցութիւնն հաճելի, ուստի և շատերուս մը-
տերիմ:

Իբր տարի մը յետոյ, քօլերան և մեծ
հրդեհը Պուրայ վիճակը կերպարանափոխ ը-
րին, մեր դպրոցը փակուեր էր, ամէնքս
ցրուեր էինք, Ռուբէնի հայրը մեռեր, և
ինքն յանկարծ քսան հազար ոսկիի տէր
դարձեր էր. ուստի մեր ընկերական կա-
ցութեանց մէջ անգունդ մը բացուած լի-
նելով, այլ ևս չկրցանք մէկգմէկ տեսնել և
իրարու մօտին լուր առնուել: Տասն երկու
տարի յետոյ հանդիպեցայ իրեն. վաղեմի
ծոյլն ու պերճասէրը չուայտ ու լիտի կե-
նօք և յիմար ձեռնարկութիւններով իւր
ժառանգութիւնն հաւու վրայ բեռնելու
չափ թեթեւեցուցեր և հոգւով ու մարմնով
գրեթէ փճացեր էր: 50-60 ոսկի դրամա-
գլխով՝ լումայափոխութիւն կ'ընէր և, ըստ
իւր խօսքին, օրն հազիւ 10 զրուշ կը
չահէր. գունատ, աչքերը խորացած, աշ-
տից ոսկրները ցցուած, իւզոտ ֆէսով և
աղտոտ հագուստով զինքը տեսնելուս, ար-
դէն դէմքին վրայ առատապէս բուսած
մօրուքին և պէխերուն ներքեւ, խիստ
դժուարաւ կրցի զինքը ճանչել. հասկցայ
թէ զմեզ իրարմէ բաժնող դրամական խտրն
այլ ևս գոյութիւն չունէր. տեղեկութիւն-
ներ խնդրեցի իւր կենցաղոյն վրայ. պատ-
մեց իւր անցեալը. ըմպելեաց, կանանց և
զեղխութեան գերի եղած էր հօրը մահու-
նէն յետոյ, և վերջապէս, ամէն ինչ կորու-
սելէ զինի, ստիպուեր էր խանի մէջ բնա-
կարան մը վարձել. ամէն երեկոյ կը գինով-
նար, կ'ընթրէր և յետոյ կ'երթար խշտեա-
կի մը վրայ կը խորդար մինչև լոյս. «այս է
ամէն աւուր կեանքս, բայց, յարեց, որով-

հետեւ ծայր աստիճան ցատկոտ եմ, կը պա-
տահի յաճախ որ ասոր անոր հետ կը կըռ-
ուիմ ու բանտին հետ դործ կը բացուի»: Այս
անգամ ալ զգացի որ մատուր ու բա-
րոյական կացութեանց անանցանելի վիճ մը
բարուած է իմ և անոր միջեւ. հեռացայ իր-
մէ՝ տխրութեամբ, գրեթէ զուսանօք: Մը-
խիթարութիւն զգացի հօրս երբեմն ըսած
խօսքն յիշելով. «եթէ զաւակդ լաւ է, ի՞նչ
փոյթ թէ մալ թողուս իրեն. եթէ յուր է,
ի՞նչ օգուտ թէ մալ թողուս իրեն»:

Դ.

Հ Ր Ա Շ Ք Ը

1887ի սկիզբներն, առաւօտ մը գրասե-
նեկին մէջ, մաքուր ու շնորհքով հագուած
յաղթահառակ, գիրուկ ու զուարթ անձի
մ'այցելութիւնը կ'ընդունիմ. մտերմական
ողջոյն մը կուտայ ինձ. զարմացած, որու
հետ խօսելու պատիւ ունենալս կը հարցու-
նեմ. «չճանցա՞ք զիս, Ռուբէնն եմ». հին
յիշատակներս կը պրպտեմ, ձիգեր կ'ընեմ
և, հուսկ, այցելուիս ով լինելը կը հասկը-
նամ, ի՞նչ անկարծելի փոփոխութիւն, արդ-
եօք նո՞ր ժառանգութիւն մ'եկած էր դը-
ժնդակ կացութենէն զինքը փրկելու քիչ
ատենի համար. մանկական համակրութիւնն
ու մտերմութիւնը կեանքի յեղյակուի ըն-
թացից մէջ անշէջ կը մնան:

— Դարձեալ հարստացեր էք, ըսի, ծի-
ծաղելով. ո՞վ մեռաւ:

— Ոչ, մեռնող չկայ այս անգամ, պա-
տասխանեց, խնդրեմ կենդանի էակի վրայ
է. հարուստ եմ, ոչ դրամով. ո՛հ, դրամն
ալ միակ հարստութիւն կը համարիք,
թէպէտ զայն ալ բոլորովին չեմ մերժեր.
հիմայ հարուստ եմ, վասն զի կ'ինքու լաւա-
գոյնն ունիմ, ամէն կամաց, թեթեւագոյն
հաճոյիցս իսկ, համակերպուլ. եօթն տարի է
ի վեր հետն ամուսնացած եմ, շատ նեղու-
թիւններ կրեցինք, երբեմն հազիւ ցամաք
հաց ունեցանք ուտելու, երբէք տրտունջ
մը չլսեցի բերնէն, ընդհակառակն: Ցատկոտ
բնաւորութիւնս հետզհետէ ամրեցաւ իւր
քաղցրութեան առջեւ, աշխատանքը սիրել
սկսայ, և հիմայ, փա՛ռք Աստուծոյ, հան-
գիստ ու երջանիկ եմ. երեք զաւակ ունիմ
առողջ, կայտառ, որոց երկուքը դեռ մօ-
րերնուն շրջապագայումը կը քայլեն,
երրորդն օրորոցի մէջ է. քիչ կը վաստկիմ,
քիչ կ'ուտեմ, մաս մ'ալ կ'աւելցնեմ: Երեսն օր
խնայած դուամարներս կը պահէ, կը հաւատ-
տէ թէ բաւական դրամ ունինք, քանակու-
թիւնը չեմ հարցուներ անգամ»:

— Ուրիշ՞ գտար այդ փիլիսոփայական
քարը:

— Ո՛հ, ձեզ շնորհակալ լինելու եմ, չէ՞ք
ճանչեր ձեր վաղեմի աշակերտուհին, Թե-
րեզան. սա...:

— Թերեզա՞ն, զարմանք, մի վշտանաք,
Ռուբէն էֆէնտի, եօթն տարի առաջ երբ
ըսին որ Թերեզան գէշ մարդու մը հետ ա-
մուսնացաւ, շատ ցաւեցայ, հիմայ ուրախ
եմ տեսնելով որ տրուած տեղեկութիւնը
սխալ է եղեր:

— Բայց ոչ, բարեկամ, շատ ճշմարիտ ը-
սեր են ձեզ, կը յիշէք լումայափոխի կըր-
պակիս մէջ մեր տեսակցութիւնը. այն ա-
տեն գործերս շատ ձախորդ էին, երթալով
աւելի վատթարացան. իբր երեք տարուան

միջոց չգիտեմ ի՞նչպէս ապրեցայ, կ'զգայի
թէ ընկերութեան հետ մոլութիւններով մի-
այն կապուած էի, տղմի մէջ թաթխուած էի
և չէի զգար կացութեան զաւանթութիւնը.
կորսուած էականերու թուոյն վրայ հաստ մ'ալ
կ'աւելնար ինձմով, և գոնցէ վախճանս թիա-
րանն ըլլար. բարեկամի մը հանդիպեցայ,
աւելի շիտակը, հօրս բարեկամներէն մէկուն
որ համոզեց զիս ամուսնանալ. ո՞ր խենթն
իր աղջիկը հուսար ինձ. չերկարցունեմ, ա-
մէն խորհելու թիւն բանեցունելով բարեկամս
յաջողեցաւ Թերեզային հետ զիս կարգել.
էրիկ մարդ եմ, գիտէ՞ք. մէկ խօսքս երկու
պիտի չըլլայ. կ'երեւի թէ կ'ինս չարչարել
սկսեր եմ. զօքանչս ու աներս միջամտեցին
ի նպատակ աղջկան, որ իրենց աչքին լոյսն
էր. ի՞նչ կ'ըսէք, Թերեզան է ասոնց բերա-
նը կարկեց, «էրիկն իմն է, անոր ըրածն իմ
ուզածն է» ըսելով: Զատուեցանք տունէն և
խեղճ սենեակ մը վարձեցինք. չեմ գիտեր
ի՞նչպէս եղաւ, ճշմարտը սա է որ «որչափ
կը փափաքէս խմէ», կ'ըսէր և ես չօրս տա-
րիէ ի վեր օղիի գործածութիւնը բոլորովին
դադրեցուցած եմ. միշտ կը գոչէի թէ ձեր-
մակեղններն յաճախ լուալով չուտ կը հին-
նան և հիմայ կը տեսնե՞ս, ս'ըբան կոկիկ ու
մաքուր կը հագուիմ, երեք օրն անգամ մը
կը փոխուիմ. վերջապէս երբեմն շուկային
մէջ պատահած ձախորդութեան մը վրայ ե-
րեկոյին առիթ կը փնտռեմ կուր մը բնե-
լու, սակայն հազիւ տնէն ներս մտած, ձա-
խորդութիւնն ալ կուրն ալ կը մոռնամ, Թե-
րեզայիս անուշ ձայնն ու գրաւիչ ժպիտը
նոր ու երջանիկ կեանք մը կը պարզեւեն
ինձ. հապա պզտիկներս... Ես կը կարծեմ
թէ հրաշք մը կատարուած է վրաս, դուք
ի՞նչ կ'ըսէք:

— Սրդարեւ հրաշք, դուք բաղդաւոր էք
արդէն. կը յիշէ՞ք, դպրոց մտած ատեննիդ
ծեծը նոր դադրած էր, յետոյ մեծ հարըս-
տութեան տիրացաք, այժմ ալ կ'ին մը ու-
նիք որ ճշմարտիւ անթաւամ պսակ մ'է
ըստ ձեր պատմութեան. ի սրտէ կը շնոր-
հաւորեմ զձեզ, յարգական ողջոյններս տի-
կին Թերեզային...:

Ոտք ելայ.

— Ներեցէք, բարեկամ, յարեց խօսակի-
ցոս, կնոջս կողմանէ եկայ աղաչելու ձեզ որ
յառաջիկայ կիւրակէ մեզի հրամմէք. կարե-
ւոր խնդրոյ մը վրայ կը փափաքի ձեզ հետ
տեսակցիլ, ինքը պիտի գար, բայց փոքրիկ-
ները չը կրնար թողուլ:

Թերեզան վերստին տեսնելու, Ռուբէնի
կրած այս այլակերպութեան պատճառներն
հասկնալու, միով բանիւ լսածներուս ըս-
տուգութեան ճշգիւ վերահասու լինելու
հետաքրքրութիւնս այնքան մեծ էր որ ո-
րոշեցի ժամադրութիւնն ընդունիլ. խոս-
տացայ և հասցէն առի:

(Մնացեալն յաջորդ բնով)

Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

Նախատինքներն աւագի վրայ և բարե-
բարութիւնները մարմարիտի վրայ գրեցէք:

— Խօսքերդ կ'ըսէ. խօսքը սլաքի կը նը-
մանի. անգամ մ'որ արձակուի, այլ ևս ետ
չը դառնար:

— Աղքատը շատ բանէ զուրկ է, ա-
գահը՝ ամէն բանէ:

— Աւելի ամօթալի է բարեկամաց վը-
րայ կասկածիլ քան թէ անոնցմէ խաբուիլ:

Շ Ա Ր

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ժ. Գ.

ԵԱՂՈՒՊ — ԱՄԻՐԱ

(Շար. Գալստրոյ քիւէն)

Ինչպէս կը տեսնուի վերոգրեալ ցուցակագրութեանէն, որ քաղուած է Աստուածատուր Սրբազանի յօրինած ժամանակագրական Պատմութեանէն, Եաղուպ Ամիրայն մեծագործը Ամիրաներէն մին հանդիսացած է յերուսաղէմ: (1)

* *

Արդէն Ակնեցի Ամիրայնը՝ ամէն կողմ իրենց անմեղ յիշատակներն սփռած են:

Գնա՛ յիշմիածին, նոյն իսկ մայր տաճարին մէջ ամենայն Հայոց Հայրապետին կանգնած գմբէթարթին հանդէսը՝ Ակնեցի Ամիրայնի մը անուանը յիշատակութիւնը պիտի կարդաս:

Յերուսաղէմ՝ գլխադիր Ս. Յակովբայ մատրան սատափեայ դրան վրայի յիշատակարանն իսկ չյայտնէ՞ր Ակնեցոց բարեպաշտութիւնը, երբ կը կարգաւորէ անդ թէ՛

« Գեղեցիկ դուռնա... է յիշատակ կամար-
« կապի Նազարի որդւոյն օրհնեալ մահա-
« սաց, Մակարին, Առաքելին, Մարտիրոս
« սին և Յարութիւնին և ծնողացն և ամե-
« նայն զարմից նոցա. ընթերցողքդ յիշեա-
« ցէք և Աստուած ողորմի ասացէք. ի թը-
« վին ՌՃԶ: »

Նոյնպէս, յերուսաղէմ՝ իշմիածին անուն եկեղեցւոյն մէջ շարժական խաչքարին վրայ 166 տարի առաջ Ակնեցիին յիշատակը չե՞մք կարդար:

« Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս ի թվին ՌՃԶ ամին. կանգնեցաւ Ս. Խաչ բարեխաչ առ Աստուած վասն Կամարակայցի Նազարի-որդւոյն մահտեսի Մակարին, մահտեսի Առաքելին, մահտեսի Մարտիրոսին, մահտեսի Յարութիւնին և կողակցաց և որդւոցն նոցա և ծնողաց և համայն զարմիցն: »

Դարձեալ, յերուսաղէմ, Ս. Թէոփորոսի եկեղեցւոյն դրան վրայ գրուած երկրորդ արձանագրութիւնը՝ Ակնայ գիւղացիի մը անունը չը՞յաւերժացնէր:

« Յիշատակ է Բէնիկի սառաֆ մահտեսի Գրիգորի որդւոց սառաֆ մահտեսի Աղեքսանդրին, մահտեսի Յովնանէսին, մահտեսի Գասպարին, ի վանքն Սուրբ Յակոբայ ի դուռն Սրբոյն Թէոփորոսի եկեղեցւոյն. ՌՄԻԸ: »

Նոյն եկեղեցւոյն մէկ ուրիշ կողմն ալ մի և նոյն անձին մի ուրիշ յիշատակարանն յիշե՞մք:

« Յիշատակ է Բէնիկի սառաֆ մահտեսի

(1) Հարկ է յիշել այս առթիւ՝ թէ Եաղուպ Ամիրայնի ընծաներուն հետ յիշուած այն դաթէ հաղուպաբաշտ տոհմացին, զաւագանն, կ'աւանդուի թէ՛ Ճենովցի Հայ ուխտաւոր մեծահարուստ և երեւելի վաճառականի մը կողմանէ ընծայուած է: Երուսաղիմայ վանուց՝ Եաղուպ Ամիրայնն շատ տարիներ առաջ:

Զմիւռնացի հոգեւոր Թովմանէս Պատրիարք փորձեց՝ նոյն զաւագանին նման ուրիշ մը ևս գնել, բայց ոչ մայրաքաղաքի և ոչ Եւրոպական քաղաքաց մէջ նմանը չը կրցաւ գտնել:

Աղեքսանդրին, և մահտեսի Յովնանէսին, սոցա կողակցացն մահտեսի Արգուին, մահտեսի Եւային, ի վանքն Սրբոյն Յակոբայ, ի դուռն Սրբոյն Թէոփորոսի եկեղեցւոյն, ՌՄԻԸ: »

Վերջապէս ո՞ր կողմ դառնաս, վանքի մը մէջ պիտի գտնես կամ Ակնեցիի մը և կամ Կեսարացիի մը յիշատակը:

Բացառութիւն է Պրուսացի Անտոն Զէլէպին, որուն համար գրուած է.

« Զինի վճարելոյ փիլիպպոսի կաթողիկոսի զամենայն զգործ իւր ի Կոստանդնուպոլիս՝ դարձ արար յիշմիածին բաղում սպասուք և զարդուք և զրամովք, զորս մատուցին նմա ժողովուրդք տեղւոյն. ընդ որս և այր ոմն երեւելի և ճոխ, որոյ անուն կոչուի Անտոն Զէլէպի՝ բնիկ ի Պրուսայա՝ խոստացաւ և ետ բազում դրամս վասն չինելոյ յիշմիածին զգանգակատուն մեծ և ահեղ: Եւ Փիլիպպոս կաթողիկոս (1654) յետ հասանելոյ անդր ձեռնամուխ լեալ՝ հիմն էտրի չինել զայն ի թուին Հայոց ՌՃԳ. յաւուրս աղուհացից. յարեւմտից կուտէ մեծի տաճարին ի վերայ դրանն կից յորմն, ևն: »

Նոյնպէս Ակնեցիի մը յիշատակը չէ՞ վանայ ձանիկ գիւղի վարժարանը, որոյ տարեկան ծախքը ձանիկ Ամիրայն կը վճարէր:

Զգիտեմք թէ՛ այդ կտակ կը շարունակուի՞ գործադրուի Ամիրայնի ժառանգորդաց կողմանէ:

Միապէս Ամիրայն չէ՞ նորոգած Ակնայ Նարեկայ վանքին մատուռը:

Շարունակե՞մք տակաւին:

* *

Եաղուպ Ամիրայն՝ այն ինչ բարեպաշտական ուխտը կատարած և Սաղիմական ուղեւորութեան վերադարձը պատրաստութեամբ մնայլ բարեաւի ողջոյնը պիտի փոխանակէր Ս. Յակոբեանց միաբանութեան, և Աթուոյն նախագահ՝ Նալեան Յակոբ Պատրիարքին հրաժեշտի աջահամբոյրը պիտի մատուցանէր, և ահա՛ Նորին Սրբազնութիւնը առանձին երկար խօսակցութիւն մը կ'ունենայ Սաղիմաւոր-Ամիրայնին հետ, և կը յաջողի առաւել ևս հաճոյանալ և անոր սիրտը գրաւել:

Նալեան Յակոբ Պատրիարք՝ երեք տարի և մէկ ամիս Պատրիարքութիւն ընելով յերուսաղէմ, կարի ձանձրացած և տաղտկացած էր տեղական հանգամանքներէն, ուստի Եաղուպ Ամիրայնի վերադարձին՝ սաստիկ կ'աղաչէ Նորին Ազնուութեան որ զինքն Սիօնի բարձունքէն ժամ յառաջ հեռանայ, և Վոսիփորի ափունքը աւաճնորդէ:

Եւ այս մտքը քանի՞ քանի՞ գրեթէ աւարդէն զրկած է եղեր Նորին Սրբազնութիւնն առ ազգայինս ի Պոլիս:

Եաղուպ Ամիրայն կը յուսադէ՛ զՆորին Սրբազնութիւնը, և իւր հետ առնելով ի Պոլիս կը բերէ, ուր ժամանած պահուն, իրեն համար օրակարգի առաջին խնդիր կը չինէ՝ այն խնդրոյն վաղվաղակի լուծումը:

Կը պատմուի թէ՛ երբ Ամիրայն կը վերադառնայ ի մայրաքաղաքս, երեք նաւ լեցուն Սաղիմական ընծաներ բերած է հետը՝ Պոլսոյ բարեկամացը և ծանօթներուն բաշխելու համար:

Կ'ըսուի թէ՛ Եաղուպ Ամիրայնն նստած առաջատանաւուն Աւստրիացի ճարտար նաւագետն ուխտագնացութեան վերադար-

ձին՝ այնքան համակրուած է Ամիրայնի բընաւորութեանը, որ ինքնայորդոր առաջարկած է Ամիրայնին՝ Անդրիականի վրայ ուղեւորութիւն մը վայելել տալ և Եւրոպական ճանապարհորդութեան մը շաւիղը գծել:

Ամիրայն մերժած է սոյն առաջարկն, առարկելով թէ՛ Պոլսոյ բազմաթիւ գործերը չեն ներեր իրեն՝ բացակայութիւնը երկարել: Երուսաղէմական ճանապարհորդութիւնը՝ պարզապէս բարեպաշտական ուխտագնացութիւն մ'է՛ և ոչ կենցաղասիրական ուղեւորութիւն մը:

Երբ Ամիրան ողջամբ կը հասնի ի Պոլիս, իրեն առաջին գործ կ'ընէ՝ Երուսաղիմայ Պատրիարք ընտրել Թէոփորոս եպիսկոպոսն, որոյ ընտրութիւնն արդէն Շղթայակիր Գըրիգոր Պատրիարք եւս կտակաւ յանձնարարած էր: Իսկ Նալեան Յակոբ Արքեպիսկոպոսն՝ վերստին Պոլսոյ Պատրիարք հաստատել կուտայ 1752ին (1), որ և աղաչանաց զիր ուղեւորվաւ Արքայն, կը յայտնէ թէ՛ ինքն յօժարութեամբ թողած է Երուսաղիմայ Պատրիարքութիւնը, և այնուհետեւ Երուսաղիմայ աթոռապատկան գործոց միջամտելու իրաւունքը չունի, և թէ՛ Երուսաղիմայ Պատրիարքութեան համար՝ արդէն ընտրուած է Թէոփորոս եպիսկոպոսն, ձեռնասուն աշակերտ Շղթայակիր Գրիգոր Պատրիարքի:

Եաղուպ Ամիրայն ալ ըստ այնմ պատրաստել կուտայ Թէոփորոսի Երուսաղիմայ Պատրիարքութեան հրովարտակն, որ կը հաստատուի 1752ին, կամ ըստ տաճկաց՝ 1170ին և կը յուրի յերուսաղէմ:

Եաղուպ Ամիրայն յոյժ երեւելի եղած էր ոչ միայն Հայոց մէջ, այլ և մայրաքաղաքիս ամէն ազգաց առջեւ յոյժ ի պատուի էր և մեծարեալ. համբաւն ամէն տեղ հուշակուած էր: Իրեն հաւատարմը կրնայ ըսուիլ որ չունէր Հայոց մէջ:

Կարգաւոր Դարապասումին հետեւեալ հատուածը.

« Սիւլէյման անուհով պալատականի մը խիստ սիրական էր հայու ազգէն անուանի Եաղուպ (Յակոբ) Ակնցին, որուն էնիշտէն էր Սիւլէյմանը. անոր ձեռքովը աս ալ խիստ մենծցաւ, հարստացաւ, խօսքը անցուկ եղավ, անանկ որ հայու ազգին մէջը մէկ հատիկ եղական մարդ մը եղավ Եաղուպը. ինչպէս ան ատեն ասանկ խօսքը անցուկ մարդ Հայու ազգէն չէր եկած Ստանպուլի մէջ: Ասոր աղկիւթիւնը աս էր որ՝ ուրիշ բարեբարութիւն ընել վաստակցեալ խիստ կը սիրէր. իր փառասիրութիւնը աս աղէկ բանի վրայ դրեր էր որ՝ շատ մարդ վաստակցեցէ, շատ մարդու աղկիւթիւն ընէ, անանկով շատ չրախմեք հանած ունէր: »

(1) «Եւ մինչդեռ յիւսկիւտար էր, յղեաց (Եաղուպ) պատգամ առ Գէորգ վարդապետ (Պատրիարքին) հրաժարիլ ինքնին ի Պատրիարքութենէ, և զի չէր նմա հնար ընդդէմ դառնալ պատգամացն Եաղուպայ, յանձն էաւ կատարել զհրաման նորա, և Եաղուպ կուցոյց զՅակոբ վերստին Պատրիարք Կոստանդնուպոլսոյ փոխանակ Գէորգայ. և զԳէորգ կարգեաց լինել առաջնորդ Պրուսայու: », ինչպէս կը գրէ Հ. Զամիչեան:

Նալեան այս երկրորդ անգամ պատրիարքանաւով, 12 տարի պաշտօնավարելէ յետոյ՝ ինքնակամ հրաժարած է, իրեն յաջորդ ընտրելով Կ. Պոլսեցի Պատմաճեան Գրիգոր վարդապետը:

Ուրբաթ օրերը որովհետեւ մէզաք չըլլալիւ չարեան, ինքը Քիրէճ Պուռնին(1) կերթար, հոն խիստ կը սիրէր երթալու թէ տեղին զուարճութեանը համար, և թէ հեռու առանձին տեղ ըլլալուն համար, բայց իրեն հոն երթալը մէկ պիւնիւ ընել մը կը ձեւանար, իր հետի եղող նաւակներուն բազմութիւնը՝ չարսուցոց նաւակներուն բազմութիւնը՝ որ հոն կերթային բան ծախելու՝ մէկ մեծ հանդէս (ալայ) մը կերեցընէին, Քիրէճ պուռնին կը լեցընէին. ճէվահիրի ապրանք բերօղներուն բազմութիւնը այնչափ կըլլար հոն, որ իբր թէ պէզոթէնը հոն կը բացվէր, ճէվահիրներուն բանայիր կըլլար. ինքն ալ կը նայէր որ՝ եկող ճէվահիրներուն հետ մէկ առուտուր մը ընէ, եկողը պարապ չի հանէ վաստակընէ. ասանկով ամէկն ուրբաթ մեծ առուտուր կըլլար հոն»

Եաղուզ Ամիրայն՝ արդարեւ շատ բարեկամներ ունէր, բազմաթիւ երախտաւորներ ունէր, սակայն իբրեւ մարդ՝ ունէր իւր թերի կողմն, ունէր իւր բազդին նախանձորդներն ու յաջակոտներն ալ: Մանաւանդ թէ ասոնք՝ ցաւալի է խոստովանիլ, որ իւր համագգիններէն էին:

Երուսաղէմէն դեռ նոր վերադարձած էր Ամիրայն. Նալեանն՝ թագաւորեալ մայրաքաղաքի Պատրիարք ընտրեց, թէ ոգորոսին՝ Երուսաղէմայ Պատրիարքութիւնը յաջողուց, Մեծ Եպարքոսէն առնելիքներն գտնածեց և ամենուն մուրհակները պատուեց, եթը սնտուկ աւանդ թողած ոսկիները տակաւին ետ չառած՝ մեծամեծ բարեգործութիւններ կատարեց անխտրաբար Հայուն, Իսլամին, Յոյնին և Հրեային, և ահա՛ նոյն 1852րդ տարին, յուլիսի 9ին, սեղանաւորական սենեակը գնացած պահուն, յանակընկալ և անժամանակ կը վախճանի Վէզիր-Խանին դրանը առջեւ, «ի սուգ և ի տըրտմութիւն Հայոց, Յունաց, Հրէից և Օսմանեանց», ինչպէս կը գրէ Այվազովսքի Փարբիէ Արքեպիսկոպոսն՝ իւր Օսմանեան Պատմութեան երկրորդ հատորին մէջ:

Եաղուզ Ամիրայն մահուան մանրամասնութիւնը Դարասպառութեամբ և ջանքերով Հայր Միքայէլ պատմագրած լինելով, չեմք ուզեր աստ երկարարանել:

Իսկ Ամիրայն կեանքին աւանդական և շահագրգիռ մանրամասնութիւնը լսելու տրամադիր եղողներն ու փախաքողներն՝ կարող են իրենց հետաքրքրութիւնը յագեցնել՝ դիմելով ի վոսիոր յէնի-Գիւզ, առ Աղնուաշուք Տէմիրճապաշեան Ենովք էֆէնտին, որ հին և ժամանակակից կենդանի պատմագիրն իրաւամբ կրնայ համարուիլ:

(1) Հին ժամանակները՝ վոսիորի Երուսաղէմ եղերաց վրայ Քիրէճ պուռնին, իբրեւ հասարակաց զբօսավայր՝ ուրբաթ և կիրակի օրերը հոն բազմութիւն կը խոնարհէին: Յետոյ Պէօյլեքտէրէի Չալիւ ըստած ընդարձակ մարդագետները զբօսատեղի դարձած է կենցաղատէրներուն, յորմէ ետեւ՝ Գալէնատի ծովեզերեայ վայրը, և հետզհետէ վոսիորի Ասիոյ կողմն ալ շէնարկով Հինքեար Իսկէլէսի յիշատակելի դաշտը, Պէյզօղէն վար՝ Սուլթանիյէ և Չուպուքը կոչուած գեղազուարճ հովիտները, և ապա՝ Գանտիլիէն վեր՝ ներսի և դրսի, կամ Մեծ և Պզտիկ-Ալօֆսիւները՝ հասարակաց ճեմավայրեր էին, ուր կիրակի, ուրբաթ և տօն օրեր՝ համազգային հազարաւոր երկսեռ ժողովուրդ կը համախմբուէր:

Միայն չմոռնամք յիշելու թէ՛ Եաղուզ Ամիրայն մահուանէն յետոյ, միակ ժառանգորդ ամիրայազատուհին ի խափալ սիրեց ամիրիուի և հաստատուիլ, ինչպէս ուրիշ ժամանակակից Ամիրայից ամենքն ալ:

Եաղուզ Ամիրայն պայազատներէն ու ժառանգորդներէն ո՞վ մնացած է այսօր, չեմք գիտեր. սակայն մեր ծանօթներէն Եաղուզեան Եաղուզ էֆէնտին մը կը յիշեմք, որ առեւտրական ատենին անդամ էր, և լեզուագէտ ու զուարճարան լինելու համբաւը կը վայելէր, և ազգային վարչական արժանեքու վրայէն ամիրայական հովեր կը ժլէր երբեմն, և գրեթէ ամէն երեկոյին՝ Թագթագեան Պողոս Պատրիարքին հետ կարծեաց փոխանակութեամբ ժամանակը կ'անցնէր:

Եաղուզ էֆէնտին՝ ամիրայազատ էր թէ ոչ, այդ ինձ պէտք չէ: Ինքը ծանիկ Ամիրայն փեսայացած էր, ամուսնանալով Մարիցա հանձմին հետ, յորմէ պայազատած է Գրիգոր էֆէնտի Եաղուզեան:

Ամիրիւնով կենսագրութիւնս, կը վերջաբանեմ:

Եաղուզի ժառանգորդներն, յետ մահուան Ամիրայն՝ երբ վերոյիշեալ աղօթմամտոյցէն պահանջած են աւանդ թողուած եթը սնտուկներն, յիշեալ աղօթմամտոյցն հետեւեալ կըրիկ պատասխանը տուած է.

«Ամէն իրաւունք պահանջում է, բայց ամէն պահանջում՝ իրաւունք է»:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Վ Է Պ Ի Կ

«ՅՈՏՈՒՆԻՔ ԵՐԱՅ ԿԵՐ ՆՈՏԻ»

«Լաւ, մայրիկ», ըսաւ Յակոբ, երիտասարդ գիւղացի հիւսնը, երբ ձմեռուան գեղեցիկ երեկոյ մը՝ իւր մօրը տնակին դռնէն թեթեաքայլ ներս կը մտնէր, «երջանկութիւն մաղթեցէք ինձ, գիւղիս ամենաբարեբաւորի մարդն եմ ես»:

— Այդ ըսածդ ստոյգ կրնայ ըլլալ, որդեակ, պատասխանեց մայրը զուարթութեամբ, բայց կ'ուզէի այդ աւետիսը պարագաներով իմանալ. Արքեօք Ասպետն իւր նոր շինուելիք շտեմարաններուն վերակեցող պիտի կարգէ զքեզ:

— Ո՛չ, շտեմարանն ի՞նչ փոյթս է, — պատասխանեց Յակոբ խնդալով, — թէ կ'ուզէ Ասպետն, ինք թող շինէ զանոնք, ինձի ի՞նչ: Մարիամ Տառնդին հետ պիտի ամուսնանամ, մայրիկ, ուստի և տեղոյս ամենահպարտ մարդն եմ:

Չայս ըսելով գեղատեսիլ երիտասարդն, իւր գգակը վեր նետեց:

Ի լուր այս խօսքին, Տիկին Եղիսարեթի գէմըն ակներեւ կերպիւ խոթորեցաւ: Յակոբ իւր միակ որդին էր, իւր հաց ճարողը, և այնքան բարի և հաստատամիտ տղայ մ'էր նա՝ որուն նման իրենց մօր սիրտը ուրախացնողներ խիստ քիչ կը գտնուէին, այնպէս որ բոլոր գիւղացի մայրերը զանիկայ իբրեւ տիպար մը կը բռնէին իւրեանց որդւոց: Սակայն, այս լուրիս վրայ տիկին Եղիսարեթը տակնապեցնողն՝ իւր որդւոյն վաստակին կամ նորա առ ինքն ունեցած սիրոյն բաժանումը հոգ ընելու անձնասէր մտա-

ծութիւնը չէր: Յակոբ երբ իւր գործէն կը վերադառնար, մաքուր և կոկիկ տան մը մէջ բնակելու, և թեթեւ կերակրիկ մը կամ թէյ առնելու սովորած էր, և իրաւունք ալ ունէր մայրը՝ կասկածելու թէ գործաւորի մը ինչպիսի կին պիտի լինի Մարիամ Տառնդ:

Յակոբ սպասեց որ իւր մայրը խօսի. «չը հաճեցա՞ք, մայրիկ», հարցուց հուսկ ուրեմն:

— Եստ ուրախ եմ որ դուն երջանիկ ես, տղաս, — ըսաւ Տիկին Եղիսարեթ, քանզի չէր կրնար ուրախութիւն արտայայտել՝ երբ չէր գգար:

Երիտասարդ հիւսնը գորովանօք կը սիրէր իւր մայրը, ուստի նորա կեցած սեղանին ծայրը նստաւ, և իւր աճառուութեամբ զուկները նորա շուրջը պատելով՝ ըսաւ մեղմիւ. «Ի՛նչ, սիրելի մայր, կը տեսնեմ թէ չախորժեցա՞ք. գիտէիք թէ օր մը պիտի ամուսնանամ, այնպէս չէ՞, և այժմ քրտան և հինգ տարեկան եմ»:

— Այո՛, Յակոբ:

— Ուստի անտարակոյս հաւանած ըլլալու էք Մարիամ Տառնդին:

— Ծիչքը ըսելով, Յակոբ, կը կարծեմ թէ Մարիամ Տառնդ գեղեցիկ աղջիկ մ'է, և անուշ բնավորութեան ալ տէր. չեմ՝ զարմանար որ տեղոյն բոլոր երիտասարդները անոր ետեւէն են, բայց վստահ չեմ թէ նա բարի տանտիկին մը կրնայ ըլլալ:

Յակոբ ցաւագին կերպով յուսահատ եւ վերաւորութեամբ կ'երեւէր:

— Լաւագոյն է աղջկուն մը համար վաճաղ մը շինել՝ ամուսին մը պահելու համար քան թէ միայն քաղաք մը՝ զայն օրսալու, խոհեմաբար շարունակեց ծեր կինը. Մարիամ մարդու մը սիրտը որսացող աղջիկ մ'է, բայց շատ վստահ չեմ թէ առնենայ այն տանտիկնական պայմանները՝ որ կարեւոր են զայն պահելու համար: Գեղեցիկ երեսները իրենց կարգին աղէկ են, բայց ոչ մարդուն կերակուրը կ'եփեն, ոչ ալ նորա կիրականօրեայ շապիկը կը հարթկեն, ինչ և է, ըսելիքս ըսի, և երբ Մարիամ գայ՝ կ'ողնունեմ զինքը իւր հարսս, քանի որ նա քու ընտրածդ է:

— Մայր, տակաւին տարին չը բոլորած՝ դուք ուրիշ կերպ պիտի խորհիք. Մարիամ պիտի գայ և տնական գործերը ձեռն պիտի սովորի. աւելի գիտէ նա քան զոր դուք կը կարծէք:

— Տէրը ձեր երկուքդ ալ օրհնէ, — ըսաւ տիկին Եղիսարեթ՝ երբ որ հուժկու տղան գիշեր բարիի համբոյր մը տուաւ իրեն, — դու շատերէն աւելի արժանի ես բարի կնոջ մը:

Գեղեցիկն Մարիամ Տառնդ, որ Տ. Եղիսարեթի փոքրցին դիմացի կողմը, պզտիկ խանութպանի մը միակ աղջիկն էր, նստած էր իւր հանգստաւէտ վառարանին քով, որոյ տաք բոցերը իւր ոսկեղինիկ գիտակներուն հետ կը խաղային: Այնքան մատղաշ և զուարթագէմ արարած մ'էր նա, իւր հագուստները այնքան մաքուր, իւր կերպերն այնքան հմայիչ, որ զարմանք չէր թէ նորա մէկ ժպիտը շատ մը յուսալից սրտեր թռնդ հանէր: Բայց ասոնց բոլորն ալ անցած էին հիմայ, ըստ որում խոստացած էր, ամառը չեկած, Յակոբի հետ ամուսնանալ:

Ուրեմն վերջապէս իւր բաղքը որոշուած էր: Ուրիշները ո՞րքան պիտի նախան-

ձէին Յակոբին վրայ: Ո՞րքան զուարճաւի պիտի լինէր կիրակի օրը անոր հետ եկեղեցի երթալ, մինչ բոլոր գիւղը գեղեցիկ ամուլին վրայ կը խօսէին: Արդեօք վարդապետն ժողովուրդէն զինք թէ կապոյտները, կամ թէ Յակոբին իրեն տուած կերասագոյնները, կամ թէ բնաւ ժապաւէն չը դնէր, միայն պարտիզին բաց կարմրագոյն հատապաշտօններով լեցուն փշալից թափնիլ, մեծ փունջ մը՞: այո՛, այո՛, այո՛ լաւագոյն էր, քանզի Յակոբ մեծ հաճոյք պիտի դգար անկէ: Խեղճ մանկամարդ կինը այնքան վարժուած էր զբօսանքով ժամանակ անցունելու, որ կեանքը իրր երկար խաղալու ժամանակ մը կը նկատէր և գալափար իսկ չունէր անոր դուռն իրողութեանցը վրայ: Ծշմարտապէս և անկեղծօրէն կը սիրէր Յակոբը, և կը խորհէր թէ որքան աղէկ պիտի լինէր միշտ իրեն պահել զնա, բայց ոչ երբէք կը մտածէր որ և է գործի մը կամ որ և է պարտականութեան մը մասին որ առնչութիւն ունենար անոր կինը լինելուն հետ:

Շատ շաբաթներ չանցած՝ գեղեցիկն Մարիամ Տառնոյ հիւսնի մը կինը եղած էր, և ահա՛ տուն մը ունէր (1) զոր կարգադրելու էր, կերակուրներ՝ պատրաստելու, և դրամ զոր կարելի եղածին չափ երկար տալէն իւր տան ծախուց բաւեցնելու էր:

— Իրենց ամուսնութեան ճիշդ յաջորդօրը, Յակոբ պատուած հագուստ մը բերաւ անոր: Շատ կը ցաւիմ, սիրելիս, ըսաւ, «բայց հիմայ որ կին ունիմ, չեմ կրնար մօրս երթալ հագուստներս կարկատել տալու»:

— Ո՛հ, ի՞նչ ընեմ, հառաչեց Մարիամ, մեծ պատուութեամբ քննելէ յետոյ, — ո՛ւր էր թէ գլխանոց մը ըլլար Յակոբ, կամ...

Եւ յետոս երկուքը մէկին խնդացին իւր բաղձանաց անհեթեթութեանը վրայ:

Յակոբին վիճակը լաւ էր, բայց հարուստ լինելէ շատ հեռու: Ինքն էր իւր գործոյն պէտք, ուստի և դրամ աւելցնել հարկ էր քանի մը գործիք գնելու համար որոց պէտք ունէր: այս պատճառաւ իւր շաբաթական վաստակին մէկ մասը մէկ կողմ կը դնէր, և մնացեալը Մարիամին կուտար, եւ որովհետեւ իւր մայրը միշտ նոյնչափ դրամ տուն մը պահելու համար բաւական կը համարէր, կարծեց թէ Մարիամին ալ բաւական պիտի լինի: Բայց Մարիամ՝ իրր անխորձ աղբիկ մը՝ իւր կատարելիք անական գործոց մասին գաղափար իսկ չունէր: Մեծ խնդիր մ'էր իրեն համար գիտնալ թէ որքան ածուխ պիտի ապսպրէր: Հում կողմի միտք ոչխարի մսէն զանազանելը, կամ նկանակ մը հաց եփելը, և կամ համեղ կերակուր մը պատրաստելը մեծամեծ փնտնելու կը մատնէին զինքը: Յետոյ՝ հաշիւները բնաւ հաւասարակչիւ չէին գար: ամէն շաբաթ մաս մը «բաց» կը մնար, և հարկ կը լինէր անհրաժեշտ պէտքերու ցուցակ մը շինել, որոց համար վճարելի դրամ չունէր:

Պայտ մը կամ խօսակցութիւն մը իրեն մոռցունել կուտար ժամանակը՝ մինչև որ տուն կը վերադառնար քրտնած և խոնջած,

(1) Ըստ որում, մանաւանդ Անգլիոյ մէջ, սովորութիւն է որ որդիք ամուսնանալէն անմիջապէս յետոյ ծնողական յարկէն բաժնուին և առանձին տուն մը բնակելով, ուրոյն նոր ընտանիք մը կազմեն:

Ծ. Թ.

և կը գտնէր հոգնած Յակոբը որ կրակը կը վառէր: տանը մէջ թէյ չկար, և կերակուրի սպասները սենեկին չորս կողմը ցիր և ցան սիւռուած էին: Այս պարագայ գործաւորի մը համար անտանելի էր. ուստի Յակոբին անուշ բնաւորութիւնն անգամ քանի մը շաբաթ վերջը գեղնալ սկսաւ, երբ տեսաւ թէ գործերը չէին շտկուեր: և խեղճ Մարիամ որ իւր կրցածը կ'ընէր, կ'զգար թէ իւր այրը գոհ չէր և այսպէս ինքզինքը խիստ ապերձանիկ կը համարէր: Իւր դրամը յունակտա կը վատնէր՝ համադամներ գնելով նորա ճաշին համար, և յետոյ այնքան գէշ կ'եփէր զանոնք որ ուտուելու արժանի չէին:

Առաւօտ մը ձոնձրալի աշխատութեամբ անոր բոլոր գուլպաները կարկատեց, սակայն այնքան ամուր քաշած էր դերձանները որ առաջին անգամ հագնելուն բացբւեցան: Վերջապէս դրամ աւելցնելու համար անոր կիրակնօրեայ շապիկները ինք անձամբ կը հարթէր: Այս շաբաթ՝ թաշկիւնակի մը պէս թոյլ և կակուզ էին անոնք, միւսին՝ տախտակի պէս կարծր, և կոճակի ծակերն ուղայով լեցուն: Բան չէր ըսեր էտըմ, բայց միայն բէնիսոյ մը կը նետէր սեղանին վրայ և կ'ապսպրէր Մարիամին որ միւս անգամ իւր շապիկները «աղէկ հարթ կեղ գիտցողի մը» տայ:

Խեղճ մանկամարդը՝ որքան կ'աշխատէր որպէս զի իւր խանդակաթ սիրով սիրած ամուսինը, գէթ նորա պարագայ ժամերուն մէջ, երջանիկ ընելու յաջողէր: Բայց աշխարհիւ վրայ գտնուած բոլոր բարի կամքերն ալ եթէ մէկտեղ գան, քիչ մը գիտութեան ըրածը չեն կրնար կատարել:

Ժապաւէններու կամ ժանեակներու վըրայ խորհելու ժամանակ չունէր հիմայ Մարիամ. գիւղին մէջ գտնուող որ և է կնկան ունեցած գործին տասնապատիկն ունէր նա, քանզի ամենադիւրին բաներն ամենադժուար բաներն էին անոր համար, աւելի երկար ժամանակ կ'անցնէր նա խոհանոցին կրակը վառելու քան ծեր տիկին եղիսարեթ կերակուր եփելու համար:

Յակոբին մայրը մեծ խոհեմութեամբ կ'ըզգուշանար միջամտելէ, կ'արգաստէր թէ՛ իւր որդւոյն և թէ՛ իւր հարսին վրայ, երբ կը տեսնէր թէ իրենց վաղվադուկ ամուսնութեան պտուղը կը քաղին, բայց որովհետեւ ինքն լաւ գիտէր թէ Մարիամ անպատճառ խրատ պիտի խնդրէր իրմէն՝ երբ որ պէտք զգար, այս պատճառաւ մինչեւ այն ատեն զիրենք իրենց գլխուն թողուց:

— Եթե՞նչ ազուր ես սա կողով մը հաւկիթներն, ըսաւ բարեխիտ կինը այն առաւօտ, հպարտութեամբ իւր հաւերուն արտադրութեանը նայելով, քանի մը հատ Մարիամին տանիմ: Հիմա Յակոբ իւր գործին գացած է, և աղջիկն ալ երեկոյեան թէյի պատրաստութեան համար ասոնցմէ հարկաւ կ'ուզէ: Զայս ըսելով՝ գնաց և իւր որդւոյն տնակին դուռը բանալով, տեսաւ որ ճաշը տակաւին չէր աւարտած, թէև ժամանակն անցած էր: Մարիամ այն առաւօտ լաթ լուացած և մուցած էր կերակուրը պատրաստել, մինչև որ Յակոբ տուն գառնալով՝ խոհանոցը բոլորովին օճառաթաթաւ և իւր կինը խիստ հոգնած դադարած գտաւ:

Համբերութեամբ սպասեց բարի տղան, սակայն առաջ իւր մտքին մէջ պատկերա-

ցուցած տունը և իւր շուրջը տիրող այժմու անհաճոյ եղելութիւնները բաղդատելով, այլ ևս չէր կրնար չմտածել:

Վառարանին կրակը սաստիկ էր, այնքան սաստիկ որ խորտիկին կտորը՝ զոր Մարիամ գնած էր Յակոբին ճաշին համար՝ արտօրնօք եփուելով, չոր կարծր և անձամելի բան մ'էր եղեր: Ագամ բնաւ չէր ախորժեք իւր այս կերակուրէն: Պատարաքաղով այս կողմ կամ այն կողմ դարձուց այդ անհամ կտորն և կծու խօսք մը պիտի ուղղէր Մարիամին՝ եթէ ճիշդ նոյն պահուն մայրը ներս չմտնէր: Անտարակոյս մէկ տկնարկով տեսաւ ամէն բան. կետուրները զարմանալի աչքեր ունին:

Քանի մը զուարթ խօսքերով Յակոբին երեսէն տրտմութեան ամպը փառատեց և ձաթու դրաւ զանիկայ որ աղու մը պէս սուլելով իւր գործին դնաց: Յետոյ խեղճ հոգնած և այլայլած Մարիամին դարձաւ և անմիջապէս իւր մայրական թեւերուն մէջ առաւ զայն: «Խեղճ սիրելիս», ըսաւ ողորք և սրտառու ձայնով մը, «խեղճ սիրելիս», և Մարիամ պզտիկ տղու մը պէս լացաւ հեկեկանօք:

«Մայր» ըսաւ, և այս անուշ լառը ուղղակի Տիկին եղիսարեթի սիրտն իջաւ:

— Մայր, ի՞նչու տունը կ'անոնաւոր չեմ կրնար պահել կամ խեղճ Յակոբը հանգիստ ընել: Այնքան շատ կ'աշխատիմ, յիշաւ չա՛տ, չա՛տ կ'աշխատիմ:

— Թող կուտա՞ն ծեր կնկան մը որ ճշմարտութիւնը ըսէ քեզ, հարցուց տիկին եղիսարեթ՝ Մարիամին մազերը հարթարելով. պատճառն այն էր որ դուն ժամանակդ հագուստով և զուարճութեամբ անցուցիր, փոխանակ սովորելու այն բաները որ հիմայ քեզ բարի տանտիկին մը պիտի ընէին:

— Բայց կարծեցի թէ... սկսաւ Մարիամ:

— Ո՛հ, այո՛, ընդմիջեց տիկին եղիսարեթ, կարծեցիք թէ կին մը այնպէս տան կառավարութեան կը վարժուի, ինչպէս բազ մը ջուրին. այլ ո՛չ երբէք. տուն կառավարելըն ալ ուրիշ բաներու նման պէտք է որ սովորուի, և անոնք որ ամուսնանալէն առաջ չեն սովորիր, յետոյ սովորելու կը պարտաւորին և կամ բոլոր իրենց կեանքը խառնակութեանց մէջ կ'անցնեն: «Ցատքելէդ առաջ վար նայէ», այս է իմ խրատս դեռատի աղջկանց, որոց ամէնքն ալ ամուսնանալու կամք ունին, բայց կ'ուզէի գիտնալ թէ անոնցմէ քանի՞ն կ'աշխատի սովորիլ ինչ որ զիրենք բարի ամուսին պիտի ընէ:

— Բայց ի՞նչ պարտիմ ընել, հեծկտաց խեղճ Մարիամ, հիմայ ամուսնացած եմ, և Յակոբ և ես չենք կարող յաւիտեան շարունակել այսպիսի անկանոն ընթացք մը. ուստի պէտք է որ սովորիմ:

— Սիրելիս, այսքան մի զգացուիր, տակաւին շատ ուշ չէ սովորելու համար, արդէն շատ մը ներութիւններ ունեցած ես, բայց ես կուգամ և կ'օգնեմ քեզ ամէն օր, եթէ կուզես, և ամենալաւ տանտիկինը կ'ընեմ զքեզ: Միայն սա խրատս առ, եթէ երբէք աղջիկներ ունենաս, սովորեցուր նոցա վանդակներ շինել, և ոչ թէ թակարդներ միայն:

Դժուարին գործ էր, այո՛, այս խրատն յարգիւնս ածել, սակայն Մարիամին տունն իրեն պարծանք մ'է հիմայ, և Յակոբ իւր

վառարանին մաքուր և հանգստաւէտ շրջա-
բակը ապարանի մը բոլոր պերճութեանց
հետ չը փոխեր:
Թարգմ.

ԵՒԳԵՆԷ Յ. ՊԱՆՔԻՃԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ նե-
րուսն շնորհել Սերաստիոյ և Էնկիւրիւի
նահանգներու մէկ քանի գաւառաց
Հայ բանտարկեցոց ոմանց:

— Երեւանէն Նոր-Գարի հաղորդուած
տեղեկութեան մը համաձայն, անհիմն
է հղեր այն լուրը թէ Երեւանայ կող-
մը 50 տուն Հայեր հաւատաւորիս են ե-
ղեր:

— Բերայի Թաղական Խնամակալու-
թիւնը՝ ըստ խնդրանաց Թաղեցոց
յատուկ նամակաւ Սրբազան Պատրի-
արք հօրմէն խնդրեց որ Պրուսայի ա-
ռաջնորդ Տ. Բարթոլոմէոս Սրբազան
նոյն եկեղեցին հրաւիրուի, Զատիկի տօ-
նին առթիւ քարոզելու և պատարագե-
լու:

— Ս. Պատրիարք հօր հրամանաւ,
Տ. Օրմանեան եպիս. մայրաքաղաքս
եկաւ, Զատիկական տօներու միջոցին
Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին
գտնուելու համար:

— Եղեւիոյ Առաջնորդ Տ. Խորէն
եպիսկոպոս հրաժարեր է իւր պաշտօ-
նէն:

— Լիւմ անապատի վանահայր Տ. Պօ-
ղոս եպիսկոպոս Մելիքեան, որ Բաղէ-
շի առաջնորդ ընտրուած էր, հրաժա-
րեր է այդ պաշտօնէն:

— Ո՞ւր է այժմ Տ. Սուքիաս եպիս-
կոպոս Պարզեանց. կ'ըսուի թէ իւր ար-
տորուած Օրիօլ քաղաքէն հրաման ստա-
ցեր է Բօլթաւա երթալ, միւս արտո-
րելոյն՝ Տ. Ներսէս եպիսկոպոս Խիւտա
վերտեանի քով:

— Տ. Մեսրոպ վարդապետ ճեր-
մակեան Պրուսա գնաց՝ իբրեւ այցե-
լու քարոզիչ Զատիկական տօներուն
առթիւ:

— Շարթուս սկիզբը իզմիրէն մայ-
րաքաղաքս ժամանեց Կիւլպէնկեան
հանգուցեալ Սերովրէ Էփէնտիի կըրտ-
սեր որդին Յարութիւն Էփ. որ յիշեալ
քաղաքին մէջ Կիւլպէնկեան վաճառա-
տան պետն է:

Այնիւ երիտասարդը համակրելի անձ
մ'է, ուսեալ և գործունեայ. Կիւլ-
պէնկեան գերդաստանի յատուկ եղող
գեղեցիկ ձերքերը կը փայլին իւր վը-
րայ:

Նոյնպէս Մանչէսթըրէն մայրաքա-
ղաքս ժամանեց Յ. և Ե. փափաղեան
եղբարց վաճառատան տեղւոյն պետ
Փափաղեան Յարութիւն Էփ. մեր աղ-
նիւ բարեկամն:

— Սէօլէօղի Թաղ. Խորհրդոյ կող-
մանէ Ատենապետ Թորոս Էփ. Սարը-

եան և Ատենապետը Արշամ Էփ. Մ.
Կիւմիւշկերտեանն՝ նամակաւ մը Պը-
րուսայու Առաջնորդ Տ. Բարթոլոմէոս
Սրբազանին դիմելով, խնդրած է
հրաւիրել Տ. Արսէն Աւագ քահանայ
Խաչոյեանը՝ գիւղն երթալ հաստատուե-
լու, ուր ամբողջ Սէօլէօղցին անհամբեր
իւր գալտեան կ'սպասէ: Թաղ. Խոր-
հուրդն անհրաժեշտ պէտք մը կը յայտա-
բարէ՝ Տէր Արսէն հօր նման բանիւրուն
և ընտիր հանգամանօք օժտեալ եկե-
ղեցականի մը ներկայութիւնը ի ծոց
իւր հօտին:

— Խառգիւղի նախկին Աւագերէց
վախճանեալ Տ. Յակոբ քահանայի որ-
դի Գրիգոր աղա Արծրունիի Տէր հանգ-
եաւ անցեալ կիւրակէ՝ 14 մարտ ի Խառ-
գիւղ և յուղարկաւ որովհետեւ կատար-
ուեցաւ երկուշաբթի, Ս. Ստեփաննոս
եկեղեցւոյն մէջ:

Հանգուցեալը որ 72-73 տարեկան
կար, աղգիս հին տաճկադէտներէն էր
և ժամանակաւ ցորենի առևտուրով
զբաղելով, Գաւրմ-փաշայի Գավաֆեան-
մանէթոյ աղիւրի ջաղացքը կը բանե-
ցընէր: Քանի տարիներէ ի վեր առանձ-
նացած կեանք մը կը վարէր:

— Ի Թիֆլիս, Աղբիւր-Sarvag ամա-
թերթի խմբագիր Տիգրան Նաղարեանց
զրպարտալից յօդուածներ գրած լինե-
լով Արգար Յովհաննէսեանի դէմ, և
այս վերջինը դատ բացած լինելով, դա-
տարանը երեք ամսուան բանտարկու-
թեան, դատարանական ծախուց վճար-
ման, և սոյն վճիռը իւր ծախքով տե-
ղական լրագրաց մէջ հրատարակելու
դատապարտեր է զՆաղարեանց:

— Ի Կարին, մարտի սկիզբները վախ-
ճաներ է Արարկիրցի Հանէսեան Յակոբ
աղա՝ ի հասակի 80 ամաց, թողլով վեց
արու եւ չորս աղջիկ զաւակ: Յակոբ
աղա՝ ի կենդանութեան՝ իւր հարստու-
թիւնը իւր զաւակաց բաժնելով, 712 1/2
օսմ. ոսկի ևս բաժին հանած է աղգ.
հաստատութեանց՝ հետեւեալ կերպով:

Օսմ. ոսկի

Արարկիրի Հանէսեան աղջկանց	
վարժարանին	250
Աղգ. Ս. Փրկչեան Հիւանդանոցին	100
Կարնոյ Ս. Լուսաւորիչ վանուց	
տաճարին շինութեան ի նպաստ	100
Կարնոյ եկեղեցւոյն նորոգութեան	
համար	100
Ս. Երուսաղեմայ	50
Արարկիրի եկեղեցւոյն նորոգու- թեան համար	50
Կարնոյ Աղբատաց Խնամակալու- թեան	35
Արարկիրի Աղբատաց Գանձանակին	17 1/2
Կարնոյ Մուսուրկա գիւղին մէջ	
բացուելիք դպրոցին համար	15

Օսմ. ոսկի 717 1/2

Վերոյիշեալ Հանէսեան աղջկանց
վարժարանը անցեալ տարի կառուցուեր
է՝ ծախիւք Հանէսեան Թաղէոս Էփէն-
տիի:

— Ի Զմիւռնիա ամսոյս 17 ին 65ամ-
եայ վախճաներ է Պօղոս Էփ. վարպետ-
եան, որ տեղւոյն պատուաւոր վաճա-
ռականներէն մին էր և հիմնադիրը
վարպետեան տան, որ ծանօթ է Զմիւռ-
նիոյ և Մանչէսթըրի մէջ իւր ունեցած
ճիւղերով: Հանգուցեալը տեղւոյն թէ՛
կառավարութեան և թէ՛ աղգային ժո-
ղովոց, Խորհրդոց և մասնախմբոց յա-
ճախ անդամակցած և հանրային դոր-
ժոն կեանք մը անցուցած է: Սիրելի
եղած էր ամէն աղգի ժողովրդոց՝ իւր
ընտիր ընտիր ձիրքերուն շնորհիւ:

— Վիեննայի պարսկական դեսպան
անուաներ է նախկին նախարար հայ-
աղգի Նարիման-խան Էնիկոլովեան-
Մամիկոնեանց:

— Պարսկաստանն ևս Զիգակիյի ար-
ուեստահանգիսին մասնակից ընելու
համար, Վեհ. Շահը ներկայացուցիչ
կարգեր է երկու հայաղգի վաճառա-
կաններ, Արշակ խան և Միքըա Սկենտեր
խան Քորոյեանցները, որոնք արդէն
ճամբայ ելեր են՝ իրենց հետ ունենա-
լով տեղական ապրանքային նմանքեր: Այս
առթիւ Վեհ. Շահը Արշակ խան Քա-
րոյեանցին շնորհեր է Մուխ-իւլ-բիւնար
տիտղոսն:

— Նիւ-Եորքի «Գեղարուեստական
Արտագրութեանց» ժողովը կը բանակ-
ցի եղեր հանրածանօթ հայաղգի նկա-
րիչ Այվազովսկիի հետ, նկարել տալու
համար մի քանի մեծադիր ծովային նը-
կարներ, որք պիտի դրուին Ֆիլատել-
ֆիոյ և Վաշինկթընի դրամատեարց
գեղարուեստական թագարանաց մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի Բարիզ, Ռիպոյի նախարարութիւնը
հրաժարեցաւ՝ ծերակոյտի և երեսփ. ժողո-
վոյ մէջ ծագած վէճի մը հետեւանօք: Նոր
նախարարութիւն կ'ազմուեցաւ: Նախարա-
րապետն է Պ. Շ. Տիւրիւի:

— Հիսալիս երեւան ելեր է ռուսական
սահմանաց վրայ, ի Զալուչէ:

— Նոր Տայլէ Ալի. Յայրուկ, գերման
կառավարութեան թերթն, յիշելով թէ վեր-
ջերս Ֆրանսային երկու Գերման թղթակիցք
արտաքսուած են՝ հասարակութեան ուշա-
գրութիւնը Բանամայի խնդրէն այլուր փո-
խադրելու համար, կ'ըսէ. «Այս գէպէն
կրնա՞ք հասկնալ թէ Գերմանիա ինչ բան
կրնայ սպասել Ֆրանսայի կողմանէ, եթէ
աւելի ծանր դժուարութիւնք ծագին հոն
և ժողովրդեան ուշադրութիւնն ուրիշ տեղ
դարձնել ուզուի»:

— Վարժապետաց վիճակը բարւոքե-
լու համար, Ֆրանսայի երեսփ. ժողովն
քանի մը միլիոն ֆր. աւելի դրաւ կա-
ռավարութեան տրամադրութեան ներ-
քեւ՝ թոշակներն աւելցնելու եւ լաւ ևս
քաջալերելու համար վարժապետներն:
Քննութիւնք աւելի խիստ պիտի լինին
այսուհետեւ վարժապետաց ընտրու-
թեան մասին:

— Ֆրանսիայի Ե ժողովոյ քուէ արկած մէկնոր օրէնքին համաձայն, առեւտրական ընկերութիւնք այսուհետեւ պիտի կրնան մինչեւ 25 ֆր. ի բաժնեթուղթ հանել, մինչ ցայս վայր առնուազն 100 ֆր. ի բաժնեթուղթ կրնան, ինչ հանել 200,000 ֆր. դրամադրիսի համար, և 500 ֆր. ի նոյն դումարէն առելի դրամադրիսոց համար: Նոյն ժողովըն որոշեց նաեւ որ օրինական տոկոսի սակն այսուհետեւ 100 ին 4 լինի քաղաքային կամ պարզ առնելիքներու համար և 100 ին 5՝ առեւտրական դործողութեանց համար:

— Ռումանիոյ մէջ վախճանեալ Տօք. Քսէնաքրադիս անուն Յոյն մը Մէկ միլիոն ֆր. կտակեր է Յունաստանի և ուրիշ յունաբնակ տեղերու բարեգործակա՛ն և կրթական հաստատութեանց: Հանգուցեալն արդէն մասնաւոր հիւանդանոց մը հիմնած էր ի Ռումանիա և ապագայն ևս ապահոված է կտակակատար կարգեր է իւր կինն որ նոյնպէս մեծ հարստութիւն ունի:

— Ի Գերմանիա, դերձակ Պ. Տովէ զրահակերպ համադրեստ մը հնարեր է որ ամէն տեսակ հրացաններու գնտակին կը դիմանայ եղեր, իւր գաղտնիքը կառավարութեան հաղորդելու համար, Պ. Տովէ կը պահանջէ երեք միլիոն մարք մէկ անգամէն, կամ 100 տարուան մենաշնորհ՝ դերման բանակին պէւք եղած զրահապատ համադրեստը տալու, հատը 12 մարքէն:

— Աւստրիոյ էլիզապէթ կայսրուհին Նաբոլի գացեր է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբարձութիւնք. — Կիրասոնի գայմագամ Պէքիր փաշա՝ Սերաստիոյ Մարգուան գաւառակին գայմագամ, Զիլէի գայմագամ Ալի Նէվատ պէյ՝ Կիրասոնի գայմագամ, Գորշհհի կառավարիչ Սապիթ փաշա՝ Մալաթիոյ կառավարիչ, Մալաթիոյ կառավարիչ Մէհմէտ էմին էֆէնտի՝ Գորշհհի կառավարիչ անուանեցան:

Ասիական. — Սերանիկ-Մանատթըրի երկաթուղւոյն շինութեան պատուիրակ Մարկոսեան Գալուստ էֆէնտի և երկրագործական գրաստան շէնքին կառուցման վերայ հսկող հարստարար Յովսէփ էֆէնտի Սանիյէ Մալաթիոյ գաւառական, Տիւրքպէքիրի վերաքննիչ տտեներն անգամներէն Սանտանեան կարապետ էֆէնտի և տեղւոյն վաճառականներէն Գույումէեան Յարութիւն էֆէնտի՝ Սալիսէի աստիճան շէնորհուեցաւ:

— Հիւսնիմանուրի, Պէհէսնի, Քեալութէի և Ագչէտաղի գաւառակաց մէջ յաջորդաբար պատահած երկրաշարժի ցնցումներէն բոլորովին աւերակ դարձեր են 2719 տուն, 7 մզկիթ, 1 Մէարէսէ, 1 Թէքքէ, 3 վարժարան, 1 Եկեղեցի, 6 խան, 1 բաղնիք, 106 խանութ և 11 կամուրջ. մասամբ կործաներ են 1345 տուն, 94 մզկիթ, 2 վարժարան, 1 Եկեղեցի, 1 խան, 1 զօրանոց,

1 բաղնիք և 64 խանութ, մնասուեր են 216 տուն, 1 վարժարան, 2 Եկեղեցի և 112 խանութ: Լերան առեւ գտնուած 28 պարտէզներ՝ այդ լեռնէն թափած քարերով և հողերով ծածկուեր ու բնաջինջ եղեր են: Փլատակաց տակէն հանուած են 469 դիակ: 6451 անասունք փլատակաց ներքեւ մնալով կորած են: Մալաթիոյ գիւղերուն մէջ պատահած մնասները դեռ չեն կրցած քըննել զրկուած պաշտօնեայք: Ցնցմունք կը շարունակուին և խարխլած չէնքերը հետըհեռէ կը փլչին: Զիւնն եւս կը շարունակէ տեղալ: Ժողովուրդն ըստ կարելոյն կը հողացուի:

— Երուսաղեմայ գաւառին մէջ գտնուած տափառնատեղք սրբատուր պիտի կացուցուն՝ առանց օրինական արտօնութեան որ և է գիրք չտպագրելու:

— Եւսիպոլէի Յունաց Հիւանդանոցին համար 69,463 դրուշի նպատակած է, ինչպէս նաեւ 180 ծրար կտաւ, երկու արծաթէ գօտի և չորս զոյգ ապարանջան: Յիշեալ գումարի 31,378 դրուշը զրկուած է Գօնեայէն, 11,181 դրուշը՝ Էնկիւրիէն, 13,508՝ Սեւանիէն, 1,399՝ Պրուսայէն, 6,663՝ մայրաքաղաքի շրջակայ գիւղերէն և 740 դրուշ այլ և այլ անհատներէ: Գօնեայի նահանգին մէկ գիւղին մէջ բնակող Սաւէքի Օղլու Սթալլի Սիմոն էֆ. 10,000 դրուշ նուիրած է:

— Կեսարացի Միխալաքի Օմիրօլի անուն վաճառական մը 100 ոսկի նուիրեր է Եօանիս Բրօթրօմօս վանուց մէջ հաստատեալ յունական որանոցին:

— Պէյֆօղի Թղթի գործարանն սկսած է մատակարարել կառավարական բոլոր պաշտօնատանց համար պէտք եղած թուղթերը:

— Եդեսիոյ թաղապետութիւնն որոշած է դեղարան մը հաստատել, որ ձրիաբար դեղ պիտի տայ կարօտ անձանց:

— Սասիկ ձմեռ ընել կը շարունակէ գաւառաց մէջ: Մայրաքաղաքիս մէջ նաեւ օդը չկրցաւ տակաւին մեղմանալ:

— Ելպիսքալէն Փետր. 25 թուականաւ կը գրեն մեզ թէ, փետր. 19ի գիշերը ժամը 7 1/2 ին սաստիկ երկրաշարժ պատահեր է. ապա 8 օրուան մէջ 18 անգամ թեթեւ ցնցումներ զգացուեր են. մարդու կորուստ չկայ: շատ մը ընտանիք վրանաբնակ եղեր են. մօտակայ գիւղի մը մէջ 10 տարեկան տղայ մը փլատակաց ներքեւ մնալով մեռեր է. բնակիչք ահ ու դողի մէջ են: Ուժգին ցնցումներ տեղի ունեցեր են նաեւ ի Հալէպ, Մարաշ, Քիլիս, Այնթապ, Զէյթուն, Տարէնտէ, Սարէզ, Էսյըն: Պէսնիէն, որ 60 տունով գիւղ մ'է, ամբողջապէս աւերակ եղած է կ'ըսուի:

— Կիւրակէ օր, Բամազան ամսոյ 15րդ օրը, չքեղ կերպով տեղի ունեցաւ Խըրդայի Շէքիֆի ուխտագնացութեան հանդէսը՝ Վեհ. Սուլթանը ժամը 5ին Երւտղի կայսերական պալատէն մեկնեցաւ փառաւոր կառքի մը մէջ բաղմած, իւր քովն ունենալով կայսերազուն Բարձր. Պիւհանէտտին էֆէնտին և դէմն՝ արքունեաց հրամանատար Օսման փաշան: Նորին Վեհափառութիւն Պէշիքթաշի, Թոփխանէի ու Ղալաթիոյ ճամբով եւ Գարաքէշի կամուրջէն անցելով, ժամը

6 ին թօփգարու պալատը ժամանեց, ուր կատարուեցան կրօնական արարողութիւնք և ընթերցմունք. երեկոյին Իֆթարն հոն ընելով, Ն. Վեհափառութիւն գիշերուան ժամը մէկին նոյն հանգիսիւ կայսերական պալատ վերադարձաւ, Այա Սօֆիայի ու Տիվան Եօլուի մեծ պողոտայէն, Շահադաթ Պաշիէն և Ունքաբանի կամուրջէն անցնելով ու Ղալաթիոյ ճամբով՝ Վեհ. Սուլթանին անցած բոլոր ճամբայներուն վրայ երկու կողմը բարեւի կեցած էին հեծեալ ու հետեւակ զինուորներ, ոստիկաններ, ոստիկան-զինուորներ, թաղապետութեան պաշտօնեաներ, ժողովրդեան ստուար բաղմութիւն մը և զանազան ազգերու վարժարանաց աշակերտք:

— 50 ֆիւս շաքարի եղէգներ Ֆրանսայէն բերուելով, Ատանայի ու Հալէպի նահանգները զրկուած են մշակուելու համար:

— Քուկէի երկարուկեաց պարտատու սերուվերջին վիճակահանութեան մեծ պարգեւը՝ 600,000 ֆրանք՝ շահած են, կ'ըսուի, Սպարապետի դրան քարտուղարներէն Զէքի էֆէնտի և իւր ընկերք, որք ընկերութեամբ բաղդատում (produit) մը գնած էին:

— Արսաւոլոր ձմեռ ու ցուրտ, եղաւ այս տարի թուրքիոյ զանազան կողմերն: Երուսաղէմէն ստացուած նամակ մը կը ժանուցանէ թէ խիստ շատ տարիներէ ի վեր չմանը չտեսնուած սաստկութեամբ ձիւն տեղացեր է հոն և ցուրտին պատճառաւ մէկ թիզի չափ անհալ մնացեր է. քաղաքին շրջակայքն ալ ձեան մրրիկներ պատահեր են, որոց հետեւանքն եղեր է բաղմութիւ անձանց մահն և խիստ շատերու հիւանդութիւնը:

Պոլսոյ մէջ թէպէտ ամէն մ'ի վէր ձիւն կամ անձրեւ չտեղար, բայց ցուրտն ու քամին յոյժ կծու են. շատերն անոնցմէ՝ որ գարնան զալուստն ողբունելու համար ուղեցին իրենց հանգերձները թիթեւցնել, ենթակայ եղան հիւանդութեանց. պաշտօնական արձանագրութեանէն կը տեսնուի թէ մարտ 13էն 19, Պոլսոյ մէջ 328 հոգի մեռած են. սովորաբար այդքան ժամանակամիջոցի մէջ մահուց թիւն 250ը չանցնիր:

Այս կենսական առթիւ խորհուրդկուտանք ժողովրդեան որ այս տարւոյ Զատիկի այցելութեանց համար թեթեւ հագուստներ դորձած լէ, ցուրտ առնելէ զգուշանայ:

Ա Ր Ժ Է Գ Գ Ի Ա Մ Ո Յ			
Օսմ. լիւան 100 գրշ. էն			
Մեհմէդիէ	108 27	Վեցնոց	101
Քառ ուղ. մէհմէ	106 30	Բուսիոյ բօլ	90 10
Մանր մէհմէ	102 30	Նաթայէն	87 35
Մէթալիք	95 20	Գրիմից	51 16
Հինգնոց	100 30	Անգղ. լիւան	110 3
Մանէթ թղթադրած 8 78			
Գանալիտէ	26	Բուս. երկ.	94 1/8
Թահլիլ. Օսմ.	82 50	Թապիլիէ	17

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Ջապիէ փողոց, թիւ 61